

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Գիտական մեծարժեք նոր ու ստուարածաւալ գիրք է հրատարակել բանագիտութեան դոկտոր Վերժինէ Սվազլեանը: Հաւանաբար նախախնամութիւնը նրան մանուկ հասակից նախապատրաստել էր 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան վերապրածների եւ նրանց սերունդների յիշողութեան մէջ պահպանուած ազգային աղէտների, նաեւ ազգային ձեռքբերումների ու թանկագին յուշերը մարդկութեանը ի պահ տալու համար: Սվազլեանը բանագիտական ասպարէզ է մտել Սարգիս Հայկունու կեանքն ու գործը լուսաբանող գրքով (1973 թ.), եւ ահա այսօր նա ունի սեփական աշխատասիրութեամբ ստեղծած մի պատկառելի գրադարան: Նրան ենք պարտական այսօր սեղանին ունենալու համար Արցախ-Ուտիքի հայ ժողովրդական հէքիաթները (1973 թ.), նաեւ Մեծ Հայքի այլ նահանգների՝ Տարօն-Տուրուբերանի հէքիաթները (1984 թ.): Դրանց յաջորդում են Մուսա լեւան (1984 թ.), Կիլիկիայի (1984 թ.), Վան-Վասպուրականի (1998 թ.), Պոլսահայութեան (2000 թ.), Ռուսաստանի հայութեան (2020 թ.) բանահիւսական ստեղծագործութիւնների հրատարակումը:

Պատմական արժեքի առումով եզակի են այն ջանքերը, որ գիտնականը գործադրել է աշխարհի տարբեր երկրներում ապրող ցեղասպանութեան վերապրածների վրկայութիւնները գրառելով եւ դրանք ոչ միայն մեզ՝ հայերիս, այլեւ աշխարհի մարդկութեանը ներկայացնելով: Ցեղասպանութիւնը վերապրածների վրկայութիւններն ամփոփող գրքերը լոյս են տեսել նաեւ անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն, թուրքերէն լեզուներով: Դրքերի մեծագոյն մասը հրատարակել է ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւնը: Լոնտոնում 2006-ին լոյս տեսած աշխարհի բանահիւսութիւնը ներկայացնող հանրագիտարանում «Հայաստան» յօդուածի հեղինակը վերստին Վերժինէ Սվազլեանն է (տե՛ս “The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife”, volume 2, pp. 357-372):

Ահա այս հարուստ ինքնաստեղծ գրադարանին բանագէտն աւելացրեց նոր գիրք՝ «Ամերիկահայոց բանաւոր աւանդոյթը ժամանակի հոլովոյթում» խորագրով (904 էջ): Դիրքը բացւում է «Հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացեալ Նահանգներում» քարտէզով (քարտէզը կազմել է Հ. Գ. Սարգսեանը): Հատորն աւարտում է «Ամերիկահայոց շրջանում տարածուած ժողովրդական կատարումներ» ձայներիզով:

Դիրքը երկլեզու է՝ հայերէն ու անգլերէն: Դրանում, բացի գիտական գրականութեան համար պարտադիր ու բազմատեսակ ցանկերից, կան նաեւ բանասացների լուսանկարները (էջ 836-850): Լուսանկարները՝ հայերէն ու անգլերէն, ներքեւում ծանուցում են լուսանկարի տիրոջ անուն ազգանունը, ծննդեան թուականը, ապրելու բնակավայրը:

Դրքի խմբագիրն է եղել երջանկայիշատակ բանագէտ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Յարութիւնեանը, որը «Խմբագրի կողմից» խօսքն աւարտում է հետեւեալ եզրայանգումով. «Սոյն գիտական աշխատութիւնը մինչեւ օրս հայ բանագիտութեան պատմութեան մէջ առաջինն է, որ նուիրուած է հայ սփիւռքի մեծագոյն համայնքնե-

րից մէկի՝ ամերիկահայոց բանաւոր ականդոյթի գիտական համակողմանի ուսումնասիրութեանը, որն իր պատմաճանաչողական արժէքով հայ ժողովրդի արդի մշակոյթի պատմութեան մէջ կարեւոր եւ բացառիկ արժէք է ներկայացնում»¹:

Գրքի սկզբում կայ «Ներածութիւն» բաժինը, որում հեղինակը ներկայացնում է հատորի նիւթերի մատուցման հետ կապուած հեղինակային գիտական մօտեցումները:

Գրքի առաջին բաժինը՝ «Պատմագիտական ուսումնասիրութիւն», ունի չորս ենթաբաժին:

Երկրորդ բաժինը բաղկացած է սկզբնաղբիւրներից՝ վկայութիւններով ցեղասպանութեան ականատեսների ու նրանց ժառանգների, նաեւ բանահիւսական ժանրերի առանձին տեսակների նիւթերի բաժանումով՝ հէքիաթներ, առակներ, կենդանական զրոյցներ, բարոյախրատական զրոյցներ, պատմական զրոյցներ, կենցաղային զրոյցներ, հայերը գաղթաշխարհում, հայերն Ամերիկայում, հայրենադարձներ, զաւեշտական զրոյցներ, նորեկողները խորհրդային հայրենիքում, հայաստանցիներն Ամերիկայում, ամերիկահայոց պատմական երգեր, որոնք Հայոց ցեղասպանութիւնն են (1915-1923 թթ.) ներկայացնում: Նաեւ որբի ու որբանոցի, հայրենազրկումի, պանդխտութեան, հայրենադարձութեան, մանկութեան, սիրոյ եւ ընտանիքի, կենցաղի, խնջոյքի, ազգահաւաքի ու հայրենասիրական երգեր:

Խիստ ուշագրաւ է ամերիկահայերի իմաստախօսութիւնների բաժինը, որում կան առած-ասացուածքներ, իմաստուն մտքեր, հանելուկներ եւ նման դրսեւորումներ: Գրքում տեղ են գտել ամերիկահայերի տօները ներկայացնող բաժինը, նաեւ երգերի նոտագրութիւնը:

«Պատմագիտական ուսումնասիրութիւն» բաժնի սկզբում դրուած է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս էտուարդ Զրբաշեանի՝ Սվազլեանի բանագիտական գործունէութեանը տուած հետեւեալ ճշգրիտ գնահատականը. «Վերժինէ Սվազլեանի բազմամեայ բանահաւաքչական ու բանագիտական աշխատանքն իր մեթոտական նոր մօտեցումներով եւ ծանրակշիռ արդիւնքներով նոր խօսք է հայ բանագիտութեան ասպարէզում: Նա իր բանահիւսական հարուստ ու բազմաժանր նիւթերի եւ Հայոց ցեղասպանութեան ականատես վկաների պատմած յուշերի բնագորագիտական իմաստաւորմամբ ու մանրագնին քննարկումներով իր նախադէպը չունի ընթացիկ հարիւրամեակի՝ 20-րդ դարի արեւմտահայ բանաւոր ականդութեան հաւաքման եւ ուսումնասիրման պատմութեան մէջ» (էջ 11):

Նախքան այս կարեւոր գրքի առանձին բաժիններին անդրադառնալը՝ նշենք, որ Սվազլեանի գիրքը փաստացի նիւթերի հիման վրայ առաջադրում է մի սրբազան պատգամ՝ հայը հայ է հայրենի հողի վրայ, ինչպէս Ստեփանոս Նազարեանցը կ'ասէր հայն օտարութեան մէջ հաւասար է ծովի մէջ մի կաթիլ ջրի: Այս գիրքը ինչ-որ առումով նաեւ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» գրքի խորհուրդն ունի՝ զգուշացնում է օտար երկրում հայի ուծացման մասին:

Պատահական չէ, որ Շահնուրի վէպը մտել է աշխարհի 1001 այն գրքերի ցանկի մէջ, որ ամէն մարդ պիտի կարդայ մինչեւ մեռնելը²:

¹ Վ. Սվազլեան, Ամերիկահայոց բանաւոր ականդոյթը ժամանակի հոլովոյթով, Երեւան, 2021, էջ 7: Այսուհետ այն գրքից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերով:

² Տե՛ս “1001 Books You must read before You Die”, London, 2010, p. 335.

Հստ ամերիկահայոց վկայությունների է շարադրուած «Հայերն Ամերիկայի Միացեալ Նահանգներում» բաժինը, որը փաստավաւերական հիմքով է ստեղծուած ու տեղեկատուական իւրօրինակ հանրագիտարան է: Դրանից իմանում ենք, որ առաջին հայը, որը ոտք է դրել ներկայիս ԱՄՆ-ի հողի վրայ, եղել է Ճոն Մարտին հայը՝ 1618-ին: Յետոյ 1653-ին երկու հայ վարպետներ Վիրջինիայի գաղութի ղեկավարի հրաւերով հրաւիրուել են Ամերիկա՝ շերամաբուծութիւնն ու մետաքսագործութիւնը զարգացնելու նպատակով:

XIX դարի 30-ական թուականներին հայերը Կիլիկիայից ու Անատոլիայից Ամերիկա են մեկնել կաթոլիկ միսիոներների գործունէութեան հետեւանքով: Յետագայում հայկական տարրը ստուարացել է Համիդեան ջարդերի ու յատկապէս Հայոց Մեծ ցեղասպանութեան պատճառով: Այդ հայերը կրթուել են ու Միացեալ Նահանգներում դարձել յայտնի դէմքեր: Դրանցից մէկն է «քիմիկոս-գիւտարար Քրիստափոր Տէր Սերոբեանը, որի հնարած կանաչ եւ սեւ ներկերի բաղադրութիւնը մինչեւ օրս անհնար է դարձնում ամերիկեան դոլարի նենգումը» (էջ 13):

Սվազլեանը ներկայացնում է ԱՄՆ-ում բացուած առաջին հայ եկեղեցիների ու դպրոցների համառօտ պատմութիւնը: Դրանց զուգահեռ շարադրուում է հայկական միութիւնների կազմաւորումը այդ երկրում: Չափազանց հետաքրքիր են ամերիկահայեր Պարպարա Չուգասըզեանի ու Յարութ Սասունեանի ինքնակենսագրական յուշապատումները:

Երգչուհի Պարպարա Չուգասըզեանը (ծն.1946 թ.), 2008-ին Սան-Ֆրանցիսկո-Ֆրեզնոյի իրենց առանձնատանը, ազատութիւն տալով իրեն տանջող մտքերին, խոստովանութիւններ է արել, որոնք նոր լոյս են սփռում ամերիկահայութեան կեանքի վրայ (էջ 40-42): Պարպարայի մեծ պապը համիդեան ջարդերի ժամանակ՝ 1896-ին, Մուշից գալիս է Ամերիկա: Պարպարայի ծնողները ծնուել են ԱՄՆ-ում: Նրանք, հայկական դպրոց չլինելու պատճառով, յաճախում են անգլիական դպրոց, իսկ տան խօսակցական լեզուն եղել է հայերէնը: Պարպարան բացատրում է, թէ երկու հանգամանք հայերին խանգարում է Ամերիկայում հայ մնալուն: Նախ՝ հայկական եկեղեցու պատարագը, որը գրաբարով է ու անհասկանալի, երկրորդ՝ Աստուածաշունչը հարկաւոր է քարոզել ոչ թէ գրաբար, այլ ժամանակակից հայերէնով (էջ 41): Իր ծնողները հետեւեալ պատգամն են տուել իրենց զաւակներին. «Դուն հայ ես՝ պիտի լա՛ւր ընես, դուն հայ ես՝ պիտի լա՛ւր ըլլաս, դուն հայ ես՝ պիտի աշխատիս հայու պատիւը բարձր պահե՛ս, դուն հայ ես՝ պիտի յաղթե՛ս» (էջ 41): Պարպարան հին արտագաղթածներին համեմատում է Հայաստանից վերջին տարիներին արտագաղթածների հետ, ապա տեսնում է մեծ տարբերութիւն: Առաջ որեւէ հայ չէր կամենում մուրացկանի կարգավիճակով ապրել, իսկ նոր եկած հայերի մէջ կան խաբեբաներ: Դրա համար էլ մի խանութի վրայ տէրը գրել է. «Հայերուն, սեւերուն եւ շուներուն մուտքը արգիլուած է» (էջ 41):

Այս տողերը կարգալիս յիշեցի, թէ հին գաղթած հայերը որքան մեծ պատուի են արժանացել Պուէնոս-Այրէսում, Ուրուգուայում, ուր այդ երկրների մշակոյթին ծանօթանալու համար մեկնել էի մի քանի տարի առաջ: Բոլոր մշակութային վայրերում, հիւրանոցներում, երբ իմանում էին մեր հայ լինելը, հիացմունք էին արտայայտում մեր ազգի մասին ասելով՝ ազնուական ազգ: Օգնաւականայնում ի թիւս եւրոպական մի քանի լեզուների՝ հայերէնով գրուած է «Բարի գալուստ»: Իսկ Պուէնոս-Այրէսի պանթէոնում հայազգի նշանաւոր անձերն ունեն իրենց շքեղ դամբարանները:

Յարութ Սասունեանի (ծն. 1950 թ. Հալէպ, ապրում է Լոս Անճելըսում) հարցազրույցը պատկերում է վերջինիս հայապատու ու հայրենասիրական գործունէութիւնը: Նա երկու բարձրագոյն ուսումնական հաստատութիւն է աւարտել ԱՄՆ-ում, չորս տարի ապրել է Ժնեւում եւ կարեւոր գործ է կատարել Հայոց ցեղասպանութիւնը միջազգայնօրէն ճանաչել տալու սրբազան գործում: Նա անգամ Սումգայիթի ջարդերի իրողութիւնն է միջազգային ուշադրութեան արժանացրել: Հարցազրույցում կայ հետաքրքիր փաստ: Ժնեւի ՄԱԿ-ի մարդու իրաւունքների բաժանմունքում Սասունեանը ելոյթ է ունեցել՝ դատապարտելով Սումգայիթի հայութեան ջարդերը. «Յաջորդ օրը, երբ ելոյթները սկսան, հերթը հասաւ ինծի, սկսայ դատապարտել Սումգայիթի դէպքերը: Ան ժամանակ բացառիկ բան մը պատահեց. Սովետ Միութեան ամբողջ պատուիրակութիւնը ոտքի կանգնեց եւ հեռացաւ ՄԱԿ-ի շէնքից» (էջ 417):

Յարութ Սասունեանը եղել է Քրք Քրքորեանի հիմնած «Լինսի» հիմնադրամի փոխտնօրէնը ու ներկայացնում է, թէ ինչ հսկայական գումարներ է փոխանցուել Հայաստանին ու Արցախին:

Քրք Քրքորեանը, իմանալով Լիբանանի հայկական վարժարանների նիւթական ծանր վիճակի մասին, 28 հայկական վարժարանների օգնութիւն է ուղարկել չորսուկէս միլիոն ամերիկեան տոլար (էջ 418):

Ուսանելի է ճէք Մեծորեան ու Եւա Մեծորեան ամուսինների դէպի Հայաստան ունեցած վերաբերմունքը, որոնք յաճախ եկել են Հայաստան: 2012 թուականի մայիսին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը ճէք Մեծորեանին՝ հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար պարգևատրել է «Մովսէս Խորենացի» մետալով:

Եւա Մեծորեանը, որը հիանալի ձայն ունի ու երգում էր, պատմում է Պոստոնի իր մանկութեան օրերի յիշողութիւնների մասին, որոնցում Սովետական Հայաստանն ունեցել է իր պատուաւոր տեղը. «Պատերազմէն վերջը՝ 1945-ին, ես հազիւ 14 տարեկան էի, երբ սկսած եմ բեմերու վրայ հայկական երգեր երգել: Լաւ ձայն ունէի, եւ ինձի կը սիրէին: Մենք հայկական ձեռնարկներ կը կազմակերպէինք, ինչպէս, օրինակ, Հայաստանի սովետականացման տարեդարձը՝ նոյեմբերի 29-ը, անպայման ամէն տարի կը նշէինք: Տեղի հայերը կը հաւաքուէին մեծ դահլիճի մը մէջ, աղուոր հայկական երեկոյ կ'անցկացնէինք: Շատ լաւ պարի խումբ ունէինք» (էջ 393):

Բազմաթիւ են Սվազլեանի գրառած ցեղասպանութիւնը վերապրածների վկայութիւնները ու իրենց հայութիւնը պահպանած անհատների հարցազրույցները:

Հիմա մեր հայրենիքի այս ծանր օրերին՝ Շուշիի ու Հադրութի կորստից յետոյ, լսում ենք, որ թուրքական «գորշ գայլեր» կոչուած բռնութիւններ կատարող զինուորականները յայտնուել են Շուշիում:

Սվազլեանի գրքում կայ «Թուրքերուն ծագումը՝ գորշ գայլը» զրույցը: Նրանում ասուում է, թէ թուրքերը մոնղոլական ծագում ունեն եւ եկել են Չինաստանի կողմերից: Այդ քոչուորները մի օր գորշ գայլ են տեսնում ու իրենց ձիերի վրայ նստած հետեւում են նրան: Գորշ գայլը գալիս է Հայաստան, իրենք էլ նրա հետեւից գալիս են Հայաստան: Տեսնում են լաւ երկիր է, մտածում են մնալ այդտեղ եւ հաստատուում են Հայաստանում: Դրանից յետոյ իրենց խորհրդանիշը դարձնում են Գորշ գայլը: Թուրքերը սկսում են ճնշել հայերին, ծանր հարկեր են դնում նրանց վրայ, սպանում են, այրում տները: Յետոյ սկսում են փախցնել մինչեւ տասը տարեկան քրիստոնեայ տղաներին, թլփատում են, իսլամացնում, փոխում նրանց լեզուն ու դարձնում ենիշերի: Թուրքերը

հայերին արգելում են հայերէն խօսել, մինչեւ իսկ հայերէն խօսելու համար կտրում են լեզուն:

Հիմա էլ Թուրքիայում հաւատարիմ իրենց նախնիների դաժան ու բռնի աւանդոյթներին՝ կայ «Գորշ գայլեր» անունով երիտասարդական յետադիմական կազմակերպութիւն (էջ 439):

Բանահիւսական որոշ միաւորներ, ըստ երեւոյթին, հայկական միջավայրում թափառող սիւժէներ են: Ինչպէս, օրինակ, «Թագաւորն ու աղքատը», որը կայ հէքիաթի ձեւով տարբեր նահանգներից գրառուած հիւսուածքներում: Աղքատը կարողանում է այնպիսի սուտ ասել, որ թագաւորը աղքատի բերած տոպրակը լցնում է ոսկով (էջ 446):

«Պատմական զրոյցներ» բաժնում հետաքրքիր պատումներ կան Խրիմեան Հայրիկի, Անդրանիկ Զօրավարի, Սողոմոն Թեհլիրեանի, Ուիլիւմ Սարոյեանի, Նիկոլ Աղբալեանի, Գարեգին Նժդեհի, Վազգէն Ա. կաթողիկոսի, Մոնթէ Մելքոնեանի եւ մի քանի այլ նշանաւոր հայերի մասին:

Խրիմեան Հայրիկը համեմատում է Աւարայրի հերոսամարտին մասնակցած Ղեւոնդ Երէցի, Ներսէս Մեծի, Ներսէս Շնորհալու հետ: Խրիմեան Հայրիկն իր «Պապ եւ թոռ» գործով հային պատգամում է կապուել հարազատ երկրի հետ, մշակել հողը, ստեղծել բարիք: «Հայոց Հայրիկը ոչ միայն մնաց իր բարձրութեան վրայ, այլեւ հայրենի փուշը նախընտրեց օտարի վարդից» (էջ 470):

Զօրավար Անդրանիկի մասին պատմող զրոյցում ասում է. «Իսկ ինչ կը վերաբերի թուրքերուն՝ հայրս կ'ըսէր, որ հայազգի մեծ Զօրավար Անդրանիկը միշտ հակառակ եղած է թուրքերուն եւ ըսած է դաշնակներուն. «Դուք հաշտուեցաք թուրքերու հետ, բայց ես թուրքի հետ չեմ կրնալ հաշտուիլ մինչեւ իմ մահը: Օրը պիտի գայ, որ այս յեղափոխականներն (նկատի ունի՝ երիտթուրքերին - Ու. Ս.) ալ պիտի դառնան սուլթան Համիդի պէս գազան մը եւ բոլորիդ ալ պիտի ոչնչացնեն» (էջ 471):

Սողոմոն Թեհլիրեանին ներկայացնող զրոյցում կայ այսպիսի փաստ: Թալեաթը միակը չէ, որ սպանել է Սողոմոնը, նա սպանել է նաեւ Յարութիւն Մկրտչեան անունով մի հայի, որը ոստիկանապետ Պետրիի միջոցով Թալեաթին է յանձնել Պոլսի 250 հայ մտաւորականների սեւ ցուցակը, եւ այդ ցուցակի անուններից միայն 10 մարդ է կենդանի մնացել (էջ 472):

«Անգլիագիր հայ գրող Ուիլիւմ Սարոյեանը» զրոյցում կարեւոր փաստեր են հաղորդում աշխարհահռչակ հայ գրողի մասին: Սարոյեանի «Մարդկային կատակերգութիւն» (1942 թ.) գրքի հիման վրայ նկարահանուած ֆիլմի սցենարի համար Սարոյեանն արժանացել է «Օսկար մրցանակի»: Բերում է նաեւ Սարոյեանի հետեւեալ յայտնի ինքնագնահատականը. «Թէեւ գրում եմ անգլերէն եւ ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լեզուն, որով գրում եմ՝ անգլերէնն է, միջավայրը, որ նկարագրում եմ՝ ամերիկեան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն, ես հայ գրող եմ...» (էջ 473):

Գարեգին Նժդեհին նուիրուած զրոյցում պատմում է, թէ Նժդեհին Երեւանից Սիպիր տեղափոխելուց առաջ նրա վերջին ցանկութիւնն է եղել սեփական աչքով տեսնել Արարատը (էջ 474):

Հայերը գիտեն, որ իրենք դարերի ընթացքում աշխարհին տուել են հանճարներ: Եւ սնապարծ հայերի մի տեսակ, որն առանձնապէս բարձր կրթական մակարդակ չունի,

սիրում է աշխարհի շատ նշանաւոր մարդկանց հայացքներ: Գրքում զաւեշտալի մի շարք նմանօրինակ մանրապատումներ կան: Դրանցից մէկը կոչւում է «Ճորճ Ուաշինգթընը եւ հայ տղաները»...: 1776-ին՝ Ամերիկայի անկախութեան համար մղուած կռիւներուն ժամանակ, երկու խարբերոցի հայ տղաներ իրենց զինուորական պահակակէտին մէջ, գիշերուայ ցուրտէն սառելով, մէկը միւսին կ'ըսէ.

- Սարգիս եղբայր, ինչ յիմար էինք, որ ձգեցինք մեր գեղեցիկ խարբերոցը եւ եկանք հոս, որ ցուրտէն մեռնինք:

Այդ պահուն Անգլիոյ դէմ ապստամբող ամերիկեան գաղութներու զինուած ուժերու հրամանատար Ճորճ Ուաշինգթընը, որ ձիու վրայ նստած կը շրջէր, կը լսէ ադ խօսքերը եւ կ'ըսէ.

- Տղաներ, դո՛ւք էլ հայ էք (էջ 508):

Բաւականին մեծ թիւ են կազմում հրէաների՝ ֆրանսիացիների, ռուսների եւ յատկապէս հայերի համեմատական բնութագրերը պարունակող զաւեշտալի գրոյցները: Դրանցից մէկն է՝ «Հրէաները եւ հայերը». «Դժոխքին մէջ հրէաներուն եւ հայերուն կը մտցնեն եռացող ջրով լիքը կաթսայի մը մէջը: Հրէաները իրար ուս-ուսի բարձրանալով՝ դուրս կու գան կաթսայի մէջէն՝ կ'ազատուին: Հայուն մէկը, երբ կը փորձէ դուրս գալ, անոր ոտքերէն կը քաշեն, վար կը բերեն, որ իրարու հետ խաշուին» (էջ 515):

Զաւեշտալի մանրապատումներ կան՝ կապուած Ստալինի, Ռուզուելտի, Լէնինի, Զերչիլի, Խրուշչովի եւ Ճոն Քէնէտու հետ: «Խրուշչովին քննադատող մարդը» զաւեշտում կարդում ենք. «Մարդուն մէկը Կրեմլ է գնացել, սկսել է պոռալ. «Խրուշչովը ապուշ է, Խրուշչովը էշ է»։ Անոր կը տանին բանտ կը դնեն, երկու տարի կու տան՝ Խրուշչովի դէմ խօսելու եւ տասը տարի՝ պետական գաղտնիքը մէջտեղ հանելու համար» (էջ 519):

Զաւեշտալի գրոյցներ կան կապուած Քլինթոնի, Ելցինի, Լեոն Տէր Պետրոսեանի, Պէն Լադենի, Պուշ Կրտսերի, Ճորճ Պուշի եւ Էրտողանի, Օպամայի հետ:

Բանահիւսական խաղիկների, օրորոցային երգերի հետ կան ազգահաւաքի ու հայրենաբաղձութեան պարզ, սակայն սրտանց ասուած երգեր.

Ով որ ազգը ուրանայ

Ջոյգ աչքերով կուրանայ,

Կապարեալ աղքատի պէս,

Դռնէ ի դուռ մուրայ նա:

Մենք Վարդան ենք հոգով,

Չկայ մէր մէջ օտար ոք,

Հայրենիքին օգնելով՝

Կը փոփոխենք մենք օրէցօր (589):

Հարուստ է առած-ասացուածքների բաժինը, որում դարաւոր փորձի հիման վրայ ստեղծուած իմաստախօսութիւններ են, որոնք վերժամանակեայ են՝ «Առիւծի մը հետ կռուէ, քան թէ՝ հազար հատ մուկի» (էջ 594), «Լաւ է քու տունիդ չոր հացը, քան՝ ուրիշի խորովածը» (էջ 598), «Հրէային գլուխը կ'աշխատի, հայուն՝ ձեռքերը» (էջ 600), «Ով թուրքէն խեր տեսնայ, Աստուծմէն շառ կը տեսնայ» (էջ 601), «Վատատեսը շուտ կը հիասթափուի, լաւատեսը ելք կը փնտռէ» (էջ 602), «Տալու հաճոյքն աւելի մեծ է, քան՝ ստանալու» (էջ 602) եւ այլն: Բազմաթիւ են նաեւ բարոյախօսական խրատները՝ «Ամէն յաջողած տղամարդուն ետեւը միշտ խելացի կին մը կայ, իսկ չյաջողածին ետեւը՝ մէկ

ուրիշ կին» (էջ 604), «Աստուծմէն չվախեցողէն վախեցիր» (էջ 606), «Գործէն մի՛ վախեցիր, գործը թող քեզմէ վախենայ» (էջ 607), «Դուն հայ ես՝ պիտի յաղթե՛ս» (էջ 607), «Եթէ հայու արիւն ունիս մէջդ, պիտի պայքարիս» (էջ 607), «Երբ լեզուդ կը կորսնցնես՝ ազգդ կը կորսնցնես» (էջ 608), «Յարգիր ծնողքդ եւ սիրիր» (էջ 610), «Մարդը կը գնայ, գործը կը մնայ» (էջ 611), «Մի՛ ըներ չարիք, չտեսնաս չարիք» (էջ 612), «Շատ չկռանաս, կը հեծնեն վրադ» (էջ 613), «Ազգի մը հայելին իր պատմութիւնն է» (էջ 615), «Ազգի մը ուժը անոր ոչ թէ քանակի, այլ որակին մէջ է» (էջ 615), «Ամէն մարդու բախտը իր ձեռքին է» (էջ 615), «Անիծուի այն հայը, որ կ'ուրանայ իր ազգը» (էջ 617), «Ծառը արմատով է զօրաւոր, հայը՝ իր ազգով» (էջ 620) եւ այլն:

Վերծինէ Սվազլեանի «Ամերիկահայոց բանաւոր աւանդոյթը ժամանակի հոլովոյթով» գիրքն ունի ուսուցողական խոր իմաստ: Այն մտայղացուել եւ արարուել է 40 տարի տեւած ստեղծագործական աշխատանքի շնորհիւ, երբ հեղինակը 1979, 1990, 2001, 2004, 2008 թուականներին այցելել է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, եղել է տարբեր քաղաքներում, հանդիպել ամենատարբեր զբաղմունքի ու տարիքի հայերի հետ եւ փշուր առ փշուր հաւաքել ամերիկահայերի բանաւոր ստեղծագործութեան հիւսուածքները՝ դրանք դարձնելով ընդհանուրի սեփականութիւնը եւ աւանդելով ապագայ սերունդներին:

ԱԷԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ Հայ հին եւ միջնադարեան գրականութեան եւ նրա դասական դման մեթոտիկայի ամպիոնի վարիչ

